Բ-84

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՎՈՐԳԻ ԲՈՅԱՋՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ
1950-2000թթ.

Է. 00. 04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2008

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. Հ. Գ. Սարգսյան

Պաշտոնական ընդիմախոսներ՝ պ.գ.դ. Լ. Մ. Վարդանյան
պ.գ. թ. Մ. Ռ. Գաբրիելյան

Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հուշահամալիր, Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պետական թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2008թ. հունիսի 26-ին, ժամը 14-ին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան- 0025, Չարենցի 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2008թ. մայիսի 26-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության արդիականությունը

Վերջին տարիներին Հայաստանում զգալիորեն աճել է հետաքրքրությունը բնակչության ժողովրդագրական խնդիրների նկատմամբ: Այն առաջին հերթին պայմանավորված է հանրապետության ժողովրդագրական արդի գործընթացներով և հարցի սոցիալ–քաղաքական ու տնտեսական կարևորությամբ: Թեման արդիական է այնքանով, որ մեզանում քաղաքին վերաբերող էթնոժողովրդագրական բնույթի աշխատանքներ դեռևս չկան և ներկայացվող ատենախոսությունն այդ առումով առաջին փորձն է: Քաղաքի ազգագրության և առանձնապես էթնոժողովրդագրության վերաբերյալ ամբողջական աշխատանքների բացակայության հետևանքով զգալի դժվարություններ են առաջացել բնակչության վերարտադրողական վարքագիծը հասկանալու, բացատրելու և հնարավոր լուծումներ առաջարկելու առումով: Ատենախոսության մեջ փորձ է արվում ազգագրության և ժողվրդագրության անցյալի ու ներկայի տվյալների համադրմամբ ներկայացնել հանրապետության երկրորդ քաղաք Գյումրիի բնակչության ժողովրդագրական գործընթացների ու տեղաշարժերի փոփոխությունները, դրանց պատճառները և հետագա միտումները:

Թեև աշխատանքը ընդգրկում է XXդ. երկրորդ կեսը, սակայն քաղաքի արդի բնակչության ձևավորման առումով, նպատակահարմար գտանք համառոտ անդրադառնալ նաև XIX-XXդդ. սկզբների արևմտահայերի ներգաղթին ու XXդ. հայրենադարձությանը: Այս հանգամանքը շատ է կարևորվում, քանի որ ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ առանձին մարզերի, նաև Գյումրի քաղաքի արդի բնակչության ձևավորման գործում այն բացառիկ նշանակություն ունի:

Գյումրիի բնակչության բնական վերարտադրության տեմպերի նվազումը և արտագաղթի մեծ չափերն անկախության տարիներին այնպիսի ձևեր են ընդունել, որ վտանգել են ինչպես քաղաքի, այնպես էլ Շիրակի մարզի բնակչության վերարտադրության բնականոն ընթացքը, որն իր ազդեցությունն է գործել նաև սոցիալ-տնտեսական գործընթացների ու բնակչության բարոյա-հոգեբանական մթնոլորտի վրա: Քաղաքի ժողովրդագրական աննախադեպ իրավիճակը հանգեցրել է նրան, որ վերջին քսան տարիներին Գյումրիում ծնունդների թիվը պակասել է շուրջ 3,2 անգամ, իսկ մահացությունների թիվը տարեց-տարի ավելանում է: 1988-2004թթ. ընկած ժամանակահատվածում քաղաքի բնակչության թիվը նվազել է շուրջ 90 հազարով: Գյումրիի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացների համակողմանի վերլուծությունը հնարավորություն կտա մշակել քաղաքի ժողովրդագրական քաղաքականություն, որը կնպաստի հասնելու բնակչության պարզ վերարտադ-

ությանը, կայունությանը, արտահոսքի ծավալների մեղմացմանը և նախադրյալներ կստեղծվեն ամուսնությունների ու ծնունդների ավելացմանը: Այդ տեսակետից կարևորվում է նաև այն, որ հանրապետությունում մշակվող ժողովրդագրական քաղաքականության մեջ որոշակի տեղ կհատկացվեն ոչ միայն մարզերին, այլև առանձին քաղաքներին:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է նոր մեկնաբանություններ պահանջող արխիվային փաստաթղթերի և վավերագրերի, վիճակագրական տվյալների, թեմային առնչվող պատմագիտական և ժողովրդագրական գրականության քննախույզ ուսումնասիրման հիման վրա ներկայացնել հետևյալ հիմնախնդիրները:

1. Ցույց տալ Գյումրիի բնակչության ձևավորման հիմնարար փուլերը և դրանով պայմանավորված բնակչության վերարտադրության առանձնահատկություններն ու շարժընթացի միտումները:

2. Վերլուծել քաղաքի բնակչության բնական վերարտադրության շարժը էթնիկ և սոցիալական տարբեր խմբերում, համադրել ու համեմատել բնակչության բնական վերարտադրության շարժընթացը (ծնելիություն, մահացություն, բնական աճ)՝ մինչխորհրդային, խորհրդային և ետխորհրդային տարիներին, պարզել դրանց էական տարբերությունների բնույթն ու պատճառները:

3. Գնահատել բնակչության տեղաշարժերը պայմանավորող սոցիալ-տնտեսական, քաղաքական և էթնոժողովրդագրական գործոնները, կարևորելով բնակչության մեխանիկական հաշվեկշռի փոփոխության շարժառիթները:

4. Վերլուծել բնակչության բնական և տարածքային (միգրացիոն) շարժի հետևանքով ժողովրդագրական գործընթացներում տեղի ունեցած փոփոխություններն անցյալում, արդի փուլում և առաջիկա տարիներին:

5. Ցույց տալ բնակչության ազգային և դավանական կազմի փոփոխությունները պայմանավորող գործոնները:

6. Ներկայացնել բնակչության թվի, կազմի, զբաղվածության փոփոխությունները, դրանց կարևորությունը պատմական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ առումներով:

7. Համադրել Գյումրիի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացների բազմաբնույթ գնահատականները, վեր հանել օրինաչափություններն ու առանձնահատկությունները, կատարել ընդհանրացումներ, ինչպես նաև կանխատեսել ժողովրդագրական հետագա միտումները:

Հետազոտության գիտական նորույթը

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ մինչ օրս հրապարակի վրա չկա հանրապետության որևէ քաղաքի բնակչության համակողմանի էթնոժողովրդագրական հետազոտություն: Այս տեսանկյունից աշխատանքում առաջին անգամ տրվում է Գյումրիի բնակչության ամուսնությունների, ծնելիության, մահացության, տեղաշարժերի ցուցանիշները, դրանց փոփոխությունները, պատճառներն ու բնույթը, ինչպես նաև հետագա ընթացքը: Գիտական առումով կարևոր ենք համարում քաղաքի էթնոժողովրդագրական գործընթացներին զուգընթաց, որպես ամբողջություն, դրանք ներկայացնել հանրապետության բնակչության առջև ծառացած հիմնախնդիրների համատեքստում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս մի կողմից Գյումրին դիտարկել առանձին, սեփական հիմնախնդիրներով ու բարդություններով, մյուս կողմից՝ ներկայացնել ընդհանուր հանրապետական բնույթի այն սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական գործընթացները, որոնք զուգակցելով տեղական նշանակության գործոնների հետ արտահայտում են քաղաքի էությունը: Գյումրիի բնակչության համակողմանի էթնոժողովրդագրական հետազոտությունը և սպասվելիք արդյունքները կարող են օժանդակել մեղմելու քաղաքի և Շիրակի մարզի ժողովրդագրական լարվածությունը, կարգավորել բնակչության ինչպես քանակական, այնպես էլ որակական փոփոխությունները, զգալի տեղ հատկացնելով բնակչության արտագաղթի կարգավորմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը

Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է նրա հայագիտական այժմեականությամբ, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող նյութերով ու տվյալներով, նոր մեկնաբանություններով ու հետևություններով, որոնք կարող են հիմք հանդիսանալ հանրապետության այլ քաղաքային բնակավայրերի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները հետազոտելու համար: Ատենախոսությունը նպատակ ունի մեզանում դեռևս ձևավորման փուլում գտնվող գիտության երկու ճյուղերի՝ ազգագրության և ժողովրդագրության, այն է՝ էթնոժողովրդագրության տարածմանը, գիտության բնագավառում նրա դերի մեծացմանը: Նշենք, որ էթնոժողովրդագրությունը ուսումնասիրում է էթնոսների բնական վերարտադրության առանձնահատկությունները և նրանց թվաքանակի շարժընթացը, հենվելով գլխավորապես էթնիկ վիճակագրության տվյալների վրա:

Գիտական շրջանառության մեջ ներդրվող նյութերն ու տվյալները կարող են օգտագործվել ազգագրական, աշխարհագրական, սոցիոլոգիական, ժողովրդագրական, տնտեսագիտական և այլ հետազոտություններ կատարելիս: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել

նաև հանրապետության բուհական դասընթացներում: Նմանատիպ հատուկ դասընթաց մշակվել ու իրականացվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության (1993թ. ի վեր), ինչպես նաև մշակութաբանության (2006թ.) ամբիոններում: Բացի այդ ատենախոսության մեջ մշակված տեսական և մեթոդաբանական դրույթները, ուսումնասիրության նյութերը, աղյուսակները կարող են օգտագործվել էթնոժողովրդագրական հետագա հետազոտությունների ժամանակ, իսկ հետևությունները կիրառել արդյունավետ կառավարման ու ժողովրդագրական քաղաքականություն մշակելու համար: Կիրառական իմաստով այն կարող է հիմք ծառայել Գյումրիի բնակչության թվաքանակի, միգրացիոն շարժերի, բնական վերարտադրության և կազմի փոփոխման հնարավոր զարգացումների կանխատեսման տեսանկյունից:

Հետազոտության մեթոդաբանությունը

Ատենախոսության համար որպես մեթոդաբանական հիմք են ծառայել ինչպես համընդհանուր գիտական, այնպես էլ հետազոտման հատուկ մեթոդները: Լայնորեն օգտագործվել են հավաքված նյութերի ու վիճակագրական տվյալների վերլուծման, համադրման, ընդհանրացման, մակետավորման, գրաֆիկների կառուցման, ինչպես նաև սոցիոլոգիական և ժողովրդագրական մեթոդները: Աշխատանքում բնակչության վերարտադրության օրինաչափությունների ուսումնասիրությունը իրականացվել է շարժման ու զարգացման մեջ՝ բնության ու հասարակության օրենքների հետ փոխկապակցված: Բնակչության վերարտադրության փոփոխությունների ուսումնասիրության ընթացքում պահպանվել է պատմականության սկզբունքը: Ատենախոսության մեջ ընդգրկված նյութերը քննարկվել են նաև ազգագրության և էթնոժողովրդագրության մեջ ընդունված դաշտային նյութի գրանցման, նկարագրման և պատմահամեմատական մեթոդների համադրմամբ: Համակողմանի քննության և վերլուծման են ենթարկվել արխիվային բազմաթիվ նյութեր, քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) մատյանների 1926-2000թթ. ցուցանիշները, մարդահամարների և Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության (ՀԱՎՕ) նյութերը, ինչպես նաև հետազոտության նպատակին և խնդիրներին առնչվող բազմաթիվ այլ նյութեր:

Օգտագործվել են ՀԱՎՕ-ի Շիրակի տարածքային ծառայության ժողովրդագրու- թյան, արդյունաբերության, կրթության, առողջապահության և այլ բաժնների նյութերը, որոնք ընդգրկում են 1960-2001թթ.: Աշխատանքի առանձին խնդիրների բացահայտման, ինչպես նաև հնարավորինս ամբողջական վիճակագրական տվյալների ստացման նպատակով, հեղինակն օգտվել է նաև դաշտային ազգագրական նյութերից:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսությունն:

Ատենախոսության մեջ օգտագործվել են բազմաբնույթ ու մեծաքանակ գրականություն: Ուսումնասիրվող հիմնահարցերի շարքում մեծ կարևորություն է ներկայացնում XIXդ. Գյումրիի բնակչության ձևավորման, էթնոժողովրդագրական, կրոնադավանական, սոցիալ-մասնագիտական և զբաղվածության իրավիճակների քննությունը: 1850-ական թվականներից սկսած՝ հրապարակ իջան Ղ. Ալիշանի մեծարժեք աշխատությունները, որոնց մեջ խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության տեսանկյունից հատկապես կարևորվում է «Շիրակ» (Վենետիկ, 1881թ.) մենագրությունը: Անվանի հայագետն այս աշխատության մեջ մանրամասնությամբ անդրադարձել է Ալեքսանդրապոլի գավառի և քաղաքի վարչական ու ժողովրդագրական նկարագրին, քննության է առել Ռուսաստանին նրա միացման ռազմաքաղաքական և սոցիալ- տնտեսական հետևանքները: Խնդրի պարզաբանմանը դեռևս մինչխորհրդային շրջանի պատմագիտության մեջ անդրադարձել են Ն. Նիկողոսյանը, Կրպեն, Ս. Թամրազյանը և այլք:

Էթնոժողովրդագրական բազմաթիվ հետաքրքիր նյութեր կան հրապարակված «Կովկասյան օրացույցի» տարբեր թողարկումներում (լույս է տեսել 1845-1917թթ.) և «Արևելյան մամուլ»-ում: Սակայն նշված աղբյուրների տեղեկությունները բավարար չէին քաղաքի XIXդ. էթնոժողովրդագրական, դավանական, բնակչության զբաղվածության և մանավանդ սոցիալ-մասնագիտական խնդիրների պարզաբանման առումով: Նշված հարցերն իրենց համակողմանի ու ամբողջական լուծումը չստացան նաև խորհրդային և ետխորհրդային տարիներին: Զ. Կորկոտյանի, Վ. Խոջաբեկյանի, Վ. Աբրահամյանի, Լ. Դավթյանի, Թ. Հակոբյանի և Հ. Սարգսյանի մենագրությունները զգալի չափով անդրադարձել են Արևելյան Հայաստանի բնակչության ժողովրդագրական գործընթացների պարզաբանման խնդիրներին, սակայն առանձին բնակավայրերի, մասնավորապես, Գյումրի քաղաքի բնակչության էթնոժողովրդագրական ամբողջական ուսումնասիրություն դեռևս չի կատարվել: Հետևաբար փորձ ենք արել Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ) 93 ֆոնդում պահպանվող 68, 83, 84, 93-97, 109, 127, 163 ֆոնդերի բազմաթիվ գործերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ մեզ հետաքրքրող խնդիրներին տալ որոշակի պատասխաններ:

Գյումրիի պատմությանը և աշխարհագրությանն են իրենց մենագրություններում անդրադարձել Կ. Կոզմոյանը, Գ. Ղարիբջանյանը, Հ. Գաբրիելյանը, Կ. Սեղբոսյանը, Ս. Մաթևոսյանը, Թ. Կարապետյանը, Մ. Մանասյանը, Լ. Վալեսյանը և այլ հեղինակներ: Սակայն այստեղ ևս հարցերի այն շարքը, որոնք վերաբերում են XIX-XXդդ. Գյումրիի բնակչության բնական վերարտադրության, միգրացիայի, բնակչության կազմի և զբաղվածության փոփոխության խնդիրներին, ատենախոսության

շրջանակներում առաջին անգամ ու նորովի են լուսաբանվել:

Ատենախոսության մեջ արծարծված հիմնահարցերի բազմակողմանի ուսումնասիրության համար արժեքավոր սկզբնաղբյուրներ են հանդիսացել ՀԱԱ Շիրակի տարածքային բաժանմունքի, Գյումրու ՔԿԱԳ-ի ֆոնդերում և ՀՀ ԱՎՕ-ի Շիրակի մարզային գործակալության արխիվում պահպանվող վավերագրերը, որոնք մեր կողմից առաջին անգամ են մշակվել ու գիտական շրջանառության մեջ դրվել: ՀԱԱ Շիրակի տարածքային բաժանմունքի ֆոնդ 2-ի թիվ 410, 413, գործերի ուսումնասիրությամբ պարզել ենք Լենինական-Գյումրիի 1926-1973թթ. բնակչության սոցիալ-մասնագիտական կազմը, կրթական մակարդակը, զբաղվածության, ուսանողների և աշակերտների թվի շարժընթացը:

Բնակչության տեղաշարժերի, նրանց ժողովրդագրական վիճակների ուսումնասիրության համար շատ արժեքավոր են Հ. Մելիքսեթյանի, Ս. Գասպարյանի, Խ. Ավետիսյանի, Գ. Ավագյանի, Է. Դանիելյանի, Վ. Խոջաբեկյանի, Ա. Մելքոնյանի, Ս. Կարապետյանի, Ռ. Հովսեփյանի, Մ. Գալստյանի, Ն. Գաբրիելյանի մենագրությունները, ինչպես նաև Ա. Ստեփանյանի, Լ. Վարդանյանի, Հ. Սարգսյանի, Ա. Խոջոյանի, Ա. Հայրապետյանի, Ն. Գաբրիելյանի և այլոց հոդվածները: Հատկապես լավ է ուսումնասիրված XIXդ. սկզբների Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից դեպի Արևելյան Հայաստան, մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառ ու հատկապես համանուն քաղաք՝ հայերի արտագաղթի ու տեղաբաշխման մանրամասները: Առաջին աշխարհամարտի և հետագա տարիներին Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների ու հայրենադարձների պատմությունն ու վիճակագրությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Չնայած ներգաղթին նվիրված բազմաթիվ հրապարակումներին, Գյումրի ներգաղթած ու հաստատված արևմտահայերի մասին դեռևս ամբողջական աշխատանքներ չկան: Մասնավորապես խոսքս վերաբերում է 1946-1947թթ. հայրենադարձության ժողովրդագրական ցուցանիշներին: Այդ բացը լրացնելու համար ուսումնասիրելով ՀԱԱ ՇՏԲ-ի արխիվի ֆոնդ 2-ի թիվ 640-641 գործերում պահվող փաստաթղթերը, մեզ հաջողվել է պարզել նշված տարիներին քաղաքում բնակություն հաստատած հայրենադարձների թիվը, սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական կազմը, ինչպես նաև ներգաղթի աշխարհագրությունը:

Աշխատանքի համար կարևոր նշանակություն ունի նաև XXդ. երկրորդ կեսի հետազոտել Գյումրիի բնակչության տարածքային (մեխանիկական) շարժընթացի բնույթն ու դրդապատճառները: Նշենք, որ խնդրո թեմայով հետազոտություններ գրեթե չեն կատարվել, այս առումով կարևորվում են ՀՀ ԱՎՕ Շիրակի մարզային գործակալության հրատարակված տվյալները, որտեղ նշված է 1960-1987թթ. քաղաքի բնակչության ներգաղթի և արտագաղթի թվային ցուցանիշները:

Հայաստանի բնակչության բնական վերարտադրությունը բավականին մանրամասն է ներկայացված Գ. Ավագյանի, Խ. Ավետիսյանի, Լ. Դավթյանի, Վ. Խոջաբեկյանի մենագրություններում: Գյումրիի բնակչության վերարտադրության խնդիրներին իրեց աշխատանքներում մասամբ անդրադարձել են Ն. Մարգարյանը, Մ. Մանասյանը, Հ. Սարգսյանը, Ա. Բոյաջյանը: Այս խնդիրները բազմակողմանի ուսումնասիրելու համար օգտվել ենք հետևյալ սկզբնաղբյուրներից. «Կովկասյան օրացույց», XIX-XXդդ. հաշվառումներ ու մարդահամարներ, տարբեր տարիներիներին հրատարակված վիճակագրական տեղեկագրքեր և Գյումրիի ՔԿԱԳ-ի ծնունդների, մահացությունների, ամուսնությունների և ամուսնալուծությունների գրանցման մատյաններ: Մշակելով վերը նշված սկզբնաղբյուրները և օգտվելով պատմա-համեմատական ու վերլուծական մեթոդներից փորձել ենք բնութագրել Գյումրիի բնակչության վերարտադրության, հատկապես բնական աճի շարժընթացի էթնոժողովրդագրական առանձնահատկությունները XIXդ. վերջին և XXդ.:

Առաջին անգամ տրվել է քաղաքի բնակչության ժողովրդագրական անցման փուլերը և դրանց առանձնահատկությունները: Գնահատվել են տարբեր ժամանակահատվածներում ժողովրդագրական և սոցիալ-մասնագիտական գործոնների ազդեցության չափերը Գյումրիի բնակչության վերարտադրության վրա:

Աշխատանքի համար հատկապես կարևոր նշանակություն ունի Գյումրիի բնակչության էթնիկ կազմիբնական շարժի ուսումնասիրությունը: Եթե Հայաստանի բնակչության էթնիկ կազմին նվիրված ուսումնասիրությունները զգալի են, ապա քաղաքի բնակչության դրանք սակավ են: Այս առումով հարուստ նյութեր կան Ազգային արխիվի 93 ֆոնդում և խորհրդային մարդահամարներում (1926, 1939,1959, 1970, 1979,1989թթ.): Գյումրիի բնակչության էթնիկ կազմը ներկայացնելիս որպես սկզբնաղբյուրներ են հանդիսացել նաև «Կովկասյան օրացույցի», տարբեր մարդահամարների և վիճակագրական տարեգրքերի նյութերը: Աշխատանքում փորձել ենք հնարավորինս մանրամասն ներկայացնել XXդ. երկրորդ կեսի Գյումրիի բնակչության էթնիկ կազմի փոփոխման շարժառիթներն ու բնույթը:

Գյումրիի բնակչության սոցիալ-մասնագիտական կազմի հիմնախնդիրների ուսումնասիրության համար կարևորվել են Կ. Սեղբոսյանի, Հ. Գաբրիելյանի, Կ. Կոզմոյանի, Ս. Մաթևոսյանի, Թ. Կարապետյանի մենագրությունները և արխիվային բազմաթիվ փաստաթղթեր: Պետք է նշել, որ վերը հիշատակված ուսումնասիրությունները քաղաքի բնակչության սոցիալ-մասնագիտական կազմի համաժամանակյա և տարաժամանակյա պատկերը ամբողջությամբ չի ներկայացնում: Այդ առումով ուսումնասիրելով ՀԱԱ Շիրակի տարածքային բաժանմունքի և ՀՀ ԱՎՕ Շիրակի տարածքային գործակալության նյութերը, փորձել ենք ա-

ռավել մանրամասն անդրադառնալ քաղաքի բնակչության սոցիալ-մասնագիտական հիմնախնդիրներին: Ատենախոսությունում առանձնահատուկ տեղ է հատկացվել 1988թ. «Սպիտակի» երկրաշարժին և դրանից հետո ընկած ժամանակահատվածի էթնոժողովրդագրական իրավիճակին: Աղետալի երկրաշարժին նվիրված բազմաթիվ աշխատություններ կան հրապարակված, սակայն դրանցից ժողովրդագրական գործընթացների առումով կարևոր նշանակություն ունեն Վ. Խոջաբեկյանի, Ս. Բաբլումյանի մենագրությունները, ինչպես նաև Խ. Ավետիսյանի, Ն. Գաբրիելյանի, Ա. Բոյաջյանի և այլոց հոդվածները: Գյումրի քաղաքի բնակչության տեղաշարժերի և աղետի զոհերի մասին կարևոր տեղեկություններ են պարունակում «Կումայրի» թերթի հրապարակումները: Այդ օրաթերթի հավելվածի 1-85 համարներում տպագրված մահախոսականներից դուրս ենք գրել երկրաշարժից զոհվածների սեռա-տարիքային, ընտանեկան, սոցիալ-մասնագիտական և ազգային կազմին վերաբերող տվյալներ: Դրանց մշակումը հնարավորություն տվեց պարզելու զոհվածների կազմի առանձնահատկությունները: Աղետալի երկրաշարժը (թե մարդկային, թե նյութական) անդառնալի կորուստ պատճառեց Գյումրի քաղաքին, որի հետևանքները մինչ օրս էլ տեսանելի են:

1990-ական թվականներին սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքական և ժողովրդագրական գործոններով պայմանավորված, Հայաստանի, այդ թվում Գյումրիի բնակչության թվաքանակը կտրուկ նվազեց: Այս խնդիրների վերաբերյալ հրապարակումներ ունեն Վ. Խոջաբեկյանը, Մ. Գալստյանը, Ա. Մարկոսյանը, Ն. Գաբրիելյանը, Ա. Բոյաջյանը և այլոք: Նշված տարիներին հանրապետության ժողովրդագրական անկայուն իրավիճակից ելնելով, որոշ մասնագետներ փորձեր արեցին հաշվարկելու հանրապետության բնակչության թվաքանակի փոփոխությունների հետագա միտումները (Վ. Խոջաբեկյան, Գ. Ջրբաշյան և այլն): Սակայն առանձին բնակավայրերի վերաբերյալ նմանատիպ հետազոտություններ չեն կատարվել: Այդ առումով, աշխատանքում ներկայացված հաշվարկները Գյումրիի բնակչության հեռանկարային թվաքանակի վերաբերյալ, կարելի է համարել որպես առաջին փորձ:

Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը

Ատենախոսության հիմնական դրույթները և որոշ հիմնահարցեր հրապարակվել են ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայկական աշխարհագրական ընկերության, Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի, Բաթումում Կովկասի ժողովուրդներին նվիրված գիտաժողովների նյութերում և Ֆրանսիայում հրատարակված հնագիտական կատալոգում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և հավանության է

արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության և էթնոսոցիոլոգիայի բաժինների համատեղ նիստում:

Աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Աշխատանքի բովանդակությունը:

Ներածության մեջ հիմնավորված է խնդրի կարևորությունը, թեմայի արդիականությունն ու գործնական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրվածության աստիճանը, մեթոդաբանությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը: Մեզանում քաղաքի էթնոժողովրդագրական հետազոտություններ առ այսօր չեն իրականացվել, ուստի ներկայացվող ատենախոսության մեջ փորձ ենք արել հնարավորինս լրացնել այդ բացը: Աշխատանքի համար որպես աղբյուր են ծառայել ՀԱԱ և Շիրակի մարզային բաժանմունքի, Գյումրիի ՔԿԱԳ-ի ամուսնությունների, ամուսնալուծությունների, ծնունդների և մահացությունների գրանցման մատյանները, ՀԱՎՕ Շիրակի մարզային ծառայության տեղեկագրերը, Հայկական ԽՍՀ, ԽՍՀՄ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական տեղեկագրերը և հանրապետությունում մինչ օրս անցկացված մարդահամարների արդյունքները:

Գլուխ 1

Գյումրիի էթնոժողովրդագրական համառոտ բնութագիրը և բնակչության ձևավորման պատմությունը:

Այս գլուխը բաժանված է չորս ենթաբաժինների:

Առաջին ենթաբաժնում ներկայացված է Շիրակի բնակլիմայական պայմանները և ռեսուրսները, դրանց ազդեցությունը Գյումրիի բնակչության վերարտադրության և տեղաբաշխման վրա: Անդրադարձվել է Գյումրիի պատմաքաղաքական այն անցքերին, որոնք կարևոր նշանակություն են ունեցել քաղաքի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացների վրա:

Երկրորդ ենթաբաժնում համառոտ ներկայացվել են այն փոփոխությունները, որոնք կատարվեցին 1828-1829թթ. ռուս թուրքական պատերազմի արդյունքում, երբ 1829-1832թթ. ընթացքում քաղաքի բնակչության թիվն ավելացավ, իսկ կազմը փոխվեց: Կարսից գաղթած ընտանիքները բնակություն հաստատեցին Գյումրի-Ապարան-Թալին հատվածի Արագած լեռան լանջերին գտնվող բնակավայրերում: Արևմտահայերի ներգաղթից հետո Գյումրիի բնակչության թիվը կրկնապատկ-

վեց: Այսպես, 1830թ. սկզբներին Գյումրին ուներ 1350 ծուխ՝ 7250 բնակչով (3980 տղամարդ, 3270 կին), հայերը կազմում էին բնակչության 96%, թյուրքալեզու էթնիկ խմբերը՝ 3, հույները 1%-ը: Ըստ Կրպեի՝ 1829-1830թթ. Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանի առաջնորդությամբ Կարս քաղաքից Գյումրի է գաղթել 693 ընտանիք կամ 5000-5500 մարդ: XIXդ. կեսերին Ալեքսանդրապոլ քաղաքում հայերը կազմել են բնակչության ամբողջ թվի 94,9%-ը, թյուրքալեզու էթնիկ խմբերը՝ 3,6%-ը, հույները՝ 1,4%-ը, իսկ ռուսները՝ 0,1%-ը:

XIXդ. առաջին կեսին Ալեքսանդրապոլի գավառի և քաղաքի բնակչության աճը պայմանավորված էր արևմտահայերի և մասամբ ռուսների ներգաղթով: 1873թ. Ալեքսանդրապոլի բնակչությունը 20455-ից 1914թ. հասել է 51316-ի:

Աշխատանքում ներկայացվել է քաղաքի բնակչության բնական վերարտադրության, սեռատարիքային կառուցվածքի, ազգային և դավանական կազմի շարժընթացը: 1886-1913թթ. Ալեքսանդրապոլի բնակչության սեռային կազմում գերակշռել են տղամարդիկ: Բնական աճի ցուցանիշները գործուն ազդեցությունն են ունեցել ուսումնասիրվող ժամանակահատվածում քաղաքի բնակչության տարիքային կազմի փոփոխության վրա: Այսպես, 1886թ. Ալեքսանդրապոլի բնակչության 40,2%-ը եղել է մինչաշխատունակ, 56,0%-ը՝ աշխատունակ և 3,8%-ը՝ 60-ից բարձր տարիքի, իսկ 1897թ.՝ համապատասխանաբար 40,0, 56,0, 4,0%:

XIXդ. երկրորդ կեսին և XXդ. սկզբներին Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչությանը հատկանշական էր ծնելիության և մահացության գործակիցների հետզհետե նվազող ցուցանիշներ: Ալեքսանդրապոլը միատարր էթնիկ կազմ ունեցող քաղաք է եղել: 1914թ. Ալեքսանդրապոլի բնակչության էթնիկ կազմը ունեցել է հետևյալ պատկերը. հայերը կազմել են քաղաքի ամբողջ բնակչության թվաքանակի 82,5%-ը (1886թ.՝ 94,7%), ռուսները՝ 14,7% (1886թ.՝ 1,7%) և թյուրքալեզու ժողովուրդները՝ 1.9%(1886թ.՝ 3,6%):

Երրորդ ենթաբաժինը ներկայացնում է քաղաքի բնակչության սոցիալ-մասնագիտական կազմը, նրա փոփոխությունները և զբաղվածության թվի շարժընթացի ժողովրդագրական առանձնահատկությունները: Ալեքսանդրապոլի բնակչության սոցիալ-մասնագիտական կազմի փոփոխության վրա նշանակալի ազդեցություն ունեցավ արևմտահայերի ներգաղթը, նրանց մեծամասնությունը երկրագործներ ու արհեստավորներ էին:

XIX-XXդդ. սկզբին Արևելյան Հայաստանի բնակչությունը բաժանված էր արտոնյալ և ոչ արտոնյալ դասերի: Արտոնյալ դասին էին պատկանում ժառանգական ու իշխանությունների կողմից շնորհում ստացած ազնվականները, խաները, բեգերը, մելիքները, աղաները, հոգևորականությունը և վաճառականությունը: Ներկայացվել են Ալեքսանդրապոլի բնակչության արտոնյալ դասին պատկանողների թիվն ու շարժընթացը: Նշված ժամանակահատվածում քաղաքում առևտրին, արհեստագործությանը, տնայնագործությանը զուգահեռ զարգացել է նաև երկրագործությունը:

Աշխատանքի առաջին գլխի չորրորդ ենթաբաժնում հիմնավորվում են Առաջին աշխարհամարտի և ետպատերազմյան տարիներին քաղաքի բնակչության կազմի և ժողովրդագրական իրավիճակի փոփոխության շարժառիթները բնութագրող հատկանիշները: Առաջին աշխարհամարտն ալեքսանդրապոլցիներին ևս մեծ տառապանքներ և մարդկային հսկայական կորուստներ պատճառեց: Ալեքսանդրապոլի 1914թ. բնակչության թիվը (51,2 հազար) վերականգնվեց միայն 1930թ.:

Խորհրդային կարգերի հաստատումը դրական ազդեցություն ունեցավ Ալեքսանդրապոլ-Լենինականի ժողովրդագրական իրավիճակի կայունացման և բնակչության հետագա աճի վրա:

Նորաստեղծ խորհրդային իշխանության համար խիստ անհրաժեշտ էր տնտեսական ու սոցիալական շինարարության շեմին պարզել երկրի բնակչության թվաքանակի և արտադրողական ուժերի վիճակը: Այդ նպատակով 1922թ. տարեսկզբին Երևանում, իսկ աշնանը ողջ Հայաստանում և 1923թ.՝ Ալեքսանդրապոլում չափազանց դժվարին պայմաններում անցկացվեց բնակչության հաշվառում, որի տվյալներով քաղաքն ունեցել է 44,6 հազ. բնակիչ, իսկ ըստ 1926թ. մարդահամարի տվյալների՝ 42,3 հազար: Այդ տարիներին քաղաքի բնակչության թվաքանակի նվազումը բացատրվում է 1926թ. հոկտեմբերի ավերիչ երկրաշարժով, որի պատճառով հազարավոր մարդիկ զոհվեցին: 1920-1930-ական թվականներին Լենինականի շրջանի և քաղաքի բնակչության աճի մակարդակը բարձր է եղել: 1926թ. համեմատ 1939թ. Լենինականի բնակչության թիվն ավելացել է 25416-ով, այդ թվում 20122-ը՝ բնական, իսկ 5294-ը՝ մեխանիկական աճի հաշվին:

Կոլեկտիվացումը նույնպես նախադրյալներ ստեղծեց գյուղից քաղաք բնակչության հոսքի ավելացման համար: Կարելի է նշել, որ կոլեկտիվացման ավարտին մենատնտեսները որպես սոցիալական շերտ վերացան: Զրկվելով իրենց հողակտորներից ու անասուններից, նրանք բռնեցին արտագաղթի ճամփան:

1926-1939թթ. Լենինականն աչքի է ընկել բնական աճի բարձր մակարդակով: Այսպես, 1926թ. քաղաքում 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմել է 47,7, 1939թ.՝ 45,1, մահացածների թիվը՝ համապատասխանաբար 20,0, 23,5, և բնական աճը՝ 27,7, 21,6: Բերված թվերից երևում է, որ այդ տարիներին քաղաքում բնակչության բնական աճի ցուցանիշների մեջ մեծ տատանումներ չեն գրանցվել, սակայն նվազել է թե ծնելության և թե մահացության գործակիցը:

Խորհրդայնացումից հետո փոխվեցին քաղաքի բնակչության զբաղմունքի տեսակները: Արհեստագործական ձեռնարկություններին ու արհեստանոցներին փոխարինելու եկան արդյունաբերական ձեռնարկությունները: Համքարությունները Լենինականում գրեթե վերացան, իսկ արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը, նրանց մի մասն էլ գործող բանֆակերում ու ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում դարձան վարպետ-դաստիարակներ: 1926-1939թթ. ընթացքում Լենինականի տնտեսության, զբաղվածության և բնակչության թվաքանակի կայուն աճ է գրանցվել, ինչը մասամբ բացատրվում է իշխանությունների վարած սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականությամբ: Այսպես, եթե 1928թ. Լենինականի աշխատունակ բնակչության 12,4%-ն էին բանվորներ, ապա 1939թ.՝ 29,1%-ը :

Գլուխ 2

Լենինականի բնակչության էթնոժողովրդագրական բնութագիրը XXդ. երկրորդ կեսին

Այս գլուխը բաժանված է երեք ենթաբաժինների:

Առաջին ենթաբաժնում քննվել են Լենինականի բնակչության վերարտադրությանը, միգրացիային վերաբերող հարցեր: Քաղաքի տնտեսության, հատկապես արդյունաբերության ինտենսիվ զարգացման հետևանքով 1959-1970թթ. կտրուկ ավելացավ բնակչության թվաքանակը: 1959թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Լենինականն ունեցել է 108446 բնակիչ(79373 տղամարդ, 85593 կին), մոտ 40,7 հազարով ավելի, քան 1939թ., 1970թ.՝ 164966 (79373 տղամարդ, 85593 կին): Այսինքն 1959թ համեմատ 1970թ. քաղաքի բնակչության թիվն ավելացել է 56,5 հազ. մարդով կամ տարեկան միջին աճը կազմել է 4,7%, ինչը հանրապետությունում բավականին բարձր ցուցանիշ էր:

Կարճ ժամանակահատվածում Լենինականի բնակչության թվի սրընթաց ավելացումն իր գործուն ազդեցությունն ունեցավ ծնունդների բացարձակ թվի աճի վրա: Սակայն նվազեց բնակչության ծնելիության գործակցի մեծությունը: Այսպես, 1962թ. 1000 բնակչի հաշվով Լենինականում ծնվածների թիվը կազմել է 32,9 է, իսկ 1970թ.՝ 19,3: Լենինականի բնակչության ծնելիության գործակցի մեծությունը երբեմնի բարձր մակարդակից անցում է կատարել միջինի, այդ գործընթացն ունի օբյեկտիվ բացատրություն: Ընտանիքում երեխաների թվի նվազումը պայմանավորված էր շատ հանգամանքներից, որոնց մեջ առաջնայինը նյութական միջոցների անբավարարությունն էր: Այդ տարիներին նվազել է նաև քաղաքի բնակչության մահացության գործակցի մեծությունը: 1960թ. Լենինականի յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով մահացածների թիվը կազմել է 7,9 մարդ, իսկ 1969թ.՝ 6,7: Լենինականում ծնունդների գործակցի նվազումը նպաստեց նաև բնական աճի մեծության փոքրացմանը:

1960-ական թվականներին Շիրակի մարզի գյուղական և Լենինականի բնակչության տեղաշարժերի ակտիվացում նկատվեց, ինչը պայմանավորված էր արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցմամբ, որտեղ պահանջվում էին հազարավոր աշխատող ձեռքեր: Ընդհանրացնելով, նշենք, որ 1959-1970թթ. ընկած ժամանակահատվածում Լենինականի բնակչությունը մեխանիկական աճով պայմանավորված, ավելացել է 27 հազարով, որից 5,3 հազարը՝ հայրենադարձության, 8,1 հազարը՝ միութենական հանրապետություններից ներգաղթած հայերի և այլ ազգերի, 13,6 հազարը՝ հանրապետության, մասնավորապես Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի բնակչության ներգաղթի հաշվին:

Երկրորդ ենթաբաժնում ներկայացվում են 1970-80-ական թվականների քաղաքի բնակչության բնական վերարտադրության և տեղաշարժերի գործընթացները: 1970թ. հունվարի 15-ի Համամիութենական մարդահամարի տվյալների համաձայն Լենինականն ունեցել է 164,9 հազար, 1979թ. հունվարի 17-ին անցկացված Համամիութենական մարդահամարի տվյալներով՝ 206,6 հազար, իսկ 1988թ. մինչ աղետալի երկրաշարժը շուրջ 230,6 հազար բնակիչ: 1970-1979թթ. Լենինականում բնակչության տարեկան միջին աճը կազմել է 2,8 %, 1979-1988թթ.՝ 1,3%: Լենինականի բնակչության աճի նվազումը բացատրվում է նրանով, որ մեխանիկական աճի մնացորդը 1982-1988թթ. բացասական է եղել:

Լենինականի բնակչության 1970-ական թվականների ծնունդների փոփոխության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ծնելիության միջին մակարդակից անցում է կատարվում ցածրի: Մի բան, որ բնորոշ է եղել ոչ միայն Լենինականին, այլև հանրապետության մյուս խոշոր քաղաքներին: Այդ տարիներին քաղաքում ավելացել հղիության արհեստական կասեցման դիմողների թիվը:

1970-1988թթ. Լենինականի բնակչության թիվը բնական վերարտադրության հաշվին ավելացել է շուրջ 50,2 հազար մարդով կամ տարեկան միջինը՝ 2788-ով: 1970թ. 1000 մարդու հաշվով քաղաքի բնակչության բնական աճը կազմել է 13,0, 1979թ.՝ 12,5 մարդ, իսկ 1988թ.՝ 12,8: 1980-ական թվականներից սկսած Լենինականի բնակչության թվաքանակն ավելացել է բացառապես բնական վերարտադրության հաշվին: Այն հանգամանքը, որ 1980-ական թվականներից սկսած Լենինակնից մեկնողների թիվը սկսեց գերազանցել եկողների թվին, կարելի է բացատրել քաղաքի և հանրապետության գյուղական վայրերի սոցիալ-տնտեսական զարգացման նախաճգնաժամային բնույթով: 1980-1988թթ. Լենինականից արտագաղթողների մեջ մեծ թիվ

են կազմել հրեաները, բելոռուսները, ուկրաինացիները և այլ ազգեր: 1970-ական թվականների կեսերից հանրապետության գյուղական բնակավայրերից դանդաղեց բնակչության արտահոսքը դեպի քաղաքներ: Դա բացատրվում է նախ նրանով, որ գյուղական վայրերում աստիճանաբար բարձրանում էր բնակչության կենսամակարդակը, նվազում էր գյուղի և քաղաքի միջև գոյություն ունեցող պայմանների տարբերությունը, կատարելագործվում և բարելավվում էին հաղորդակցման ու կապի ուղիները, իսկ քաղաքում դանդաղում էր արդյունաբերության զարգացման տեմպերը և լրացուցիչ աշխատատեղեր գրեթե չէին ավելանում:

Երրորդ ենթաբաժնում համեմատական քննության միջոցով ներկայացվում են 1960-80-ական թվականներին Լենինականի բնակչության սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, ազգային, ընտանեկան կազմի փոփոխությունների շարժառիթները և զբաղվածության առանձնահատկությունները:

Լենինականում 1959-1988թթ. տղամարդկանց թվաքանակն ավելացել է 60772-ով, կանանցը՝ 61407-ով: Այսինքն բացարձակ թվով տղամարդկանց և կանանց թվաճը գրեթե հավասար է: Տղամարդկանց թվի աճը Լենինականում բացատրվում է 1960-80-ական թվականներին մի քանի խոշոր մեքենաշինական ձեռնարկությունների կառուցումով, որի արդյունքում տասնյակ հազարավոր աշխատունակ տարիքի, հիմնականում երիտասարդներ, այլ բնակավայրերից տեղափոխվեցին Լենինական մշտական բնակության:

Լենինականի բնակչության կրթական մակարդակի բարձրացումը բացասաբար է ազդել ընտանիքի մեծության և ծնունդների թվի աճի վրա: Ներկայացվող ժամանակահատվածում լենինականցու ընտանիքում սովորական է դառնում 1-2 երեխաներով սահմանափակվելը: 1980թ. քաղաքում ընտանիքների թիվը 46,6 հազար էր, իսկ 1988թ.՝ 52,4 հազար, այսինքն 9 տարվա ընթացքում այդ թիվն ավելացել է 12,5 %-ով: Եթե 1980թ. ընտանիքի անդամների միջին թիվը կազմել է 4,5 մարդ, ապա 1988թ.՝ 4,3: Լենինականում ընտանիքների թվի աճը բացատրվում է ոչ միայն ամուսնությունների թվաքանակի, այլև ուրիշ բնակավայրերից, հատկապես, գյուղերից երիտասարդ ընտանիքների ներհոսքի հաշվին:

Լենինականի բնակչության կրթական մակարդակի քանակական նկարագրի գնահատականը տալու համար վերլուծել ենք կրթական հաստատություններում սովորողների թվաքանակի փոփոխությունները: Այսպես, 1960/61 ուսումնական տարում Լենինականի հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը կազմել է 21,7 հազար, իսկ 1987/88թթ.՝ 33,1 հազար: Այդ տարիներին կտրուկ ավելացավ բուհերում սովորողների թիվը: Այսպես, 1964/65թթ. ուսումնական տարում

քաղաքի երկու բուհերում (Մանկավարժական և ճարտարագիտական ինստիտուտներ) սովորող ուսանողների թիվը կազմել է 470, իսկ 1987/88 ուս. տարում 4930: Բուհերում սովորողների թվի շեշտակի աճը բացատրվում է առաջին հերթին քաղաքի գիտաարտադրական ձեռնարկությունների առկայությամբ և ուսուցիչների, արդյունաբերական ձեռնարկություններում ինժեներա-տեխնիկական կադրերի պահանջարկի ավելացմամբ: 1980-ական թվականներին՝ Լենինականի տեխնիկումներում, պրոֆտեխուսումնարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում տարեկան մջին հաշվով սովորել են 8-9 հազար պատանիներ ու աղջիկներ:

Ստեղծված բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմանները, բնակչության կրթական մակարդակի բարձրացումը դրականորեն անդրադարձան Լենինականի տնտեսության հզորացման, բնակչության զբաղվածության քանակական և որակական աճի վրա: Այսպես, 1965թ. քաղաքի արտադրական ձեռնարկություններում ընդգրկված 43,2 հազար աշխատողներից մոտ 2,4 հազարը կամ 5,5 %-ը ունեցել են բարձրագույն կրթություն, 3086-ը կամ 7,1%-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Յուրաքանչյուր 1000 զբաղված բնակչի հաշվով բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ աշխատողների թիվը կազմել է 198 մարդ:

1960-1988թթ. ընկած ժամանակահատվածում Լենինականի հանրային տնտեսությունում զբաղվածների թիվը 2,5 անգամ աճել է: Քաղաքի ամբողջ պատմության ընթացքում զբաղվածության թվի նման շեշտակի աճ երբևէ չի գրանցվել: Այդպիսի աճը պայմանավորված է եղել երկու գործոնով. տնտեսական (արդյունաբերության, մասնավորապես, աշխատատար խոշոր մեքենաշինական ձեռնարկությունների կառուցում), ապա ժողովրդագրական (աշխատունակ տարիքի բնակչության աճ): 1960թ. Լենինականի բանվորների և ծառայողների թիվը կազմել է 33,4 հազար, 1970 թ.՝ 54,3 հազար, իսկ 1985թ.՝ 75,2 հազար մարդ: 1970-ական թվականներին քաղաքի արդյունաբերության զարգացման գլխավոր ճյուղերն էին՝ մեքենաշինությունը, թեթև արդյունաբերությունը և սննդի արդյունաբերությունը: 1979թ. Լենինականի մեքենաշինական ձեռնարկություններում աշխատողների թիվը կազմել է 11,3, թեթև արդյունաբերությունում՝ 21,2, այլ ճյուղերում՝ 4,0 հազար մարդ:

Ինչպես Խորհրդային Հայաստանի մյուս քաղաքային բնակավայրերը, այնպես էլ Լենինականն առանձնացել է բնակչության ազգային կազմի համեմատական միատարրությամբ: 1959թ. համեմատությամբ 1970թ. քաղաքի ամբողջ բնակչության թիվն ավելացել է 56,5 հազ. մարդով, այդ թվում, հայերինը՝ 55,4 հազարով, ռուսներինը՝ 485-ով, ադրբեջանցիներինը՝ 34-ով, ուկրաինացիներինը՝ 170-ով: 1970թ. համեմատությամբ 1979թ. Լենինականի ամբողջ բնակչության մեջ հայերի

թիվն ավելացել է 39,3 հազարով, ռուսներինը՝ 1126-ով, ադրբեջանցիներինը՝ 32-ով, քրդերինը՝ 134-ով, ուկրաինացիներինը՝ 341-ով: Իսկ հույներինը՝ պակասել է ընդամենը 5-ով, հրեաներինը՝ 66-ով և վրացիներինը՝ 60-ով:

Գլուխ 3

Գյումրիի բնակչությունը անցումնային շրջանում (XXդ. 80-ականների վերջ - XXIդ. սկիզբ)

Այս գլուխը բաժանված է չորս ենթաբաժինների :

Առաջին ենթաբաժնում համակողմանի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր տեղ է հատկացվել 1988-1992թթ. ընկած ժամանակահատվածում քաղաքի բնակչության թվի շարժընթացին ու տեղաշարժերին: 1989թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Լենինականի բնակչության թիվը կազմել է 178,6 հազար մարդ: Ինչպես տեսնում ենք, 1988թ. համեմատ 1989թ. քաղաքի բնակչության թվաքանակը պակասել է 51,4 հազ. մարդով: Աղետալի երկրաշարժից մեկ ու կես տարի անց՝ 1990թ. ապրիլ ամսվա դրությամբ, Լենինականն ունեցել է արդեն 200 հազ. բնակիչ, որից 80 հազարը բնակվել է առանձնատներում, իսկ 120 հազարը՝ ժամանակավոր կացարաններում:

Հիմք ընդունելով 1988թ. մինչ երկրաշարժյան և 1990թ. քաղաքի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալները նկատում ենք, որ բնակչությունն այդ տարիներին պակասել է 30,3 հազ. մարդով: Ստացված պաշտոնական տվյալների համաձայն, աղետից զոհվել է ավելի քան 25 հազար մարդ: Ընդ որում, ըստ բժշկական ծառայությունների 1989թ. հուլիսի 1-ի տեղեկության երկրաշարժի զոհերի ընդհանուր թիվը կազմել է 16895, այդ թվում Լենինականում՝ 10286 մարդ: Հիշյալ թվերը ևս մոտավոր են, որովհետև Լենինականի քաղխորհրդի 1989թ. հուլիսի 1-ի տեղեկության համաձայն զոհերի թիվը քաղաքում կազմել է 13101 մարդ կամ 2815-ով վերը հրապարակված թվից: Երկրաշարժից յոթ օր անց զոհերի թիվը, ըստ որոշ հեղինակների, աղետի գոտում կազմել է 21775, մեկ այլ տեղ նշվում է՝ 23286 մարդ: Եթե առաջին յոթ օրվա ընթացքում (նշենք որ առաջին երկու օրը փրկարարական ակտիվ աշխատանքներ գրեթե չեն տարվել), զոհերի թիվն անցել է 21 հազարը, ապա կարող ենք ենթադրել, որ աղետի գոտում զոհվածների թիվը 25 հազարից անցնել է, քանի որ փրկարարական աշխատանքները տարվել են մեկ ամսից ավելի: Այդ է պատճառը, որ ըստ ոչ պաշտոնական տվյալների երկրաշարժի զոհերի թիվը ներկայացվում է 55 հազար:

Ինչպես նշվեց ըստ պաշտոնական աղբյուրների զոհվածների թիվը շուրջ 25 հազար էր, որը կազմել է աղետի գոտու բնակչության ամբողջ թվաքանակի 2,6%-ը : Լենինականում զոհվածների թիվը կազմել է քաղաքի ամբողջ բնակչության 7,4 %-ը :

Երկրորդ ենթաբաժինը ներկայացնում է XXդ. վերջերին քաղաքի բնակչության թվի նվազման և արտագաղթի պատճառները, բնույթը, ուղղությունները : Տարբեր փաստերի համադրությամբ ցույց է տրվում բնակչության բնական աճի (ծնունդների շեշտակի նվազում և մահացության աստիճանական աճ) նվազման և միգրացիոն բացասական հաշվեկշռի ազդեցությունը սոցիալ-տնտեսական պայմանների ու ժողովրդագրական գործընթացների վրա:

1990-1999թթ.՝ ըստ պաշտոնական վիճակագրության Գյումրիի բնակչության ընդհանուր թիվն աճել է 11,3 հազարով կամ տարեկան միջին աճը կազմել է 1,1 հազ. մարդ: 1999-2001թթ. ընկած ժամանակահատվածում Գյումրիի բնակչության թվի կտրուկ նվազումը պայմանավորված էր նրանով, որ 1990-1999թթ. պաշտոնական վիճակագրությունը բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումը թերի էր կատարել:

1990թ. քաղաքի բնակչության թիվը կազմել է 206,6 հազար, 1999թ.՝ 211,6, իսկ 2001թ.՝ 150,9 հազար մարդ: Այսինքն, այդ 11 տարիներին քաղաքի բնակչության թիվը պակասել է 55,7 հազարով կամ 26,9%-ով: Իսկ ծնունդների ու մահացությունների թիվը 1990թ. եղել է 4334 և 1175, ինչից հետևում է, որ բնական աճը կազմել է 3159 մարդ, 1999թ.՝ համապատասխանաբար 1805 և 1447, որի դեպքում բնական աճը կազմել է 358 մարդ: Այլ կերպ ասած, 1990-1999 թթ. բնակչության բնական աճը նվազել է ավելի քան 8,8, իսկ բնակչության թիվը՝ 1,4 անգամ: 1991թ. Գյումրիում 1,3 անգամ ավելի շատ երեխա է ծնվել, քան 1998-1999թթ. միասին վերցրած: Բնակչության ծնելիության բարձր ցուցանիշներ են գրանցվել 1990-1992 թթ., որը բացատրվում է աղետներից, տվյալ դեպքում երկրաշարժից հետո կորցրած մարդկանց վերականգնելու միտումով: Գյումրիում ծնունդների ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 1991թ.՝ 4775 կամ 1000 մարդու հաշվով 23,8, իսկ ամենացածրը 1999թ.՝ 1805 կամ 8,5 մարդ: 1990-2000թթ. Գյումրիում դիտվել է բնակչության մահացության երիտասարդացում: Վերլուծելով Գյումրիի ՔԿԱԳ-ի մահացության տվյալները, պարզել ենք հետևյալը. 1990թ. քաղաքի 1175 մահացածներից 35-ը կամ 2,9%-ը 35-49 տարեկաններն են, որոնց թվում մեծ էր տղամարդկանց տեսակարար կշիռը, իսկ 1999թ. 1447 մահացածների թվաքանակում՝ 105-ը կամ 5,2 %-ը:

1990-ական թվականներին Գյումրիում կտրուկ պակասում է ամուսնությունների թիվը, իսկ հայտնի է, որ ավելի շատ թվով երեխաներ ծնվում են երիտասարդ ընտանիքներում, հետևաբար ամուսնությունների թվի նվազումը իր բացասական ազդեցությունն է ունեցել քաղաքի բնակչության ծնունդների թվի վրա:

1990-ական թվականներին Գյումրիում արդյունաբերական արտադ-

ռանքի ծավալի անկումն ուղեկցվել է նաև այդ ոլորտում աշխատողների թվաքանակի նվազմամբ: Այսպես, 1988թ. Գյումրիի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատել է շուրջ 37,8 հազար, 1997թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 10,5 հազար, իսկ 2001թ.՝ 2.1 հազար մարդ: Գյումրիի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի կտրուկ նվազումը պայմանավորված է եղել ոչ միայն աղետալի երկրաշարժի պատճառած վնասով ու մարդկային կորուստով, այլև 1990-ական թվականներին անցկացված սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններով, ԽՍՀՄ-ի փլուզումով, Ղարաբաղյան պատերազմով, տրանսպորտային շրջափակումամբ, սպառման շուկաների կորստով և այլ պատճառներով: Ասածը հաստատելու համար նշենք, որ երկրաշարժից երկու տարի անց՝ 1990թ., Գյումրիի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը կազմել է շուրջ 22 հազ., յոթ տարի անց նվազել է երկու, իսկ 2003թ՝ 10 անգամ:

Երրորդ ենթաբաժնում օգտագործելով ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները վերլուծվել է Գյումրիի բնակչության թվի շարժընթացը, կազմը և տեղաշարժերի բնույթը:

2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքներով Գյումրիի առկա բնակչության թվաքանակը կազմել է 140318 մարդ (64221 տղամարդ կամ ամբողջ բնակչության թվի 45,8%-ը, 76097 կին կամ 54,2%), իսկ մշտական բնակչությունը՝ 150917 մարդ (70846 տղամարդ կամ 46,9% և 80071 կին կամ 53,1%) : Բերված թվերից երևում է, որ քաղաքի առկա և մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների տարբերությունը բավականին զգալի է ու կազմել է 10,6 հազ. մարդ: Նման տարբերությունն առաջին հերթին բացատրվում է քաղաքից արտագնա աշխատանքի մեկնածների թվաքանակով:

Ըստ 2001թ. մարդահամարի տվյալների Գյումրիի մշտական բնակչության թվաքանակը 1970թ. համեմատությամբ պակասել է 14,9 հազարով, 1979թ. համեմատ 55, իսկ 1988թ. համեմատ 79,9 հազար մարդով :

1987-2001թթ. Գյումրիում դիտվել է մինչաշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշռի կտրուկ նվազում, իսկ աշխատունակ տարիքի բնակչության թիվը գրեթե փոփոխության չի ենթարկվել, սակայն կենսաթոշակային տարիքի բնակչության տեսակարար կշռում գրանցվել է կտրուկ աճ: Այսպիսով, XX դարի վերջին տասնամյակում Գյումրիի բնակչության թվի շարժընթացը ցույց է տալիս, որ գնալով պակասում է ծնունդների և ամուսնությունների թիվը, և ընդհակառակը՝ մեծանում է ամուսնալուծությունների ու կենսաթոշակային տարիքի բնակչության թիվը, որը ներկայումս հանգեցրել է բնակչության ժողովրդագրական ծերացման:

2001թ. ընտանիքների և նրանց անդամների թիվը համեմատվել է

1970, 1979 և 1987թթ. համանման ցուցանիշների հետ, պարզվել է, որ 1970թ. և 1979թ. մարդահամարների արդյունքների համաձայն, քաղաքի ընտանիքների անդամների միջին թիվը կազմել է 5 մարդ, 1989թ.՝ 4,3 մարդ, իսկ 2001թ՝ 3,9 մարդ: Ինչպես տեսնում ենք, վերջին 30 տարիների ընթացքում գյումրեցու ընտանիքի անդամների միջին թվաքանակում անկում է գրանցվել 1987թ. հետո, ինչը բացատրվում է առաջին հերթին ծնունդների թվի նվազմամբ : Գյումրիի ընտանիքների թվաքանակի շարժընթացը նշված տարիներին ունեցել է հետևյալ ցուցանիշները: 1970թ. ընտանիքների թիվը կազմել է մոտ 33 հազար, 1979թ.՝ 41,3, 1987թ.՝ 53,5, իսկ և 2001թ.՝ 38,6 հազար: Վերլուծելով բնակչության ընտանեկան կազմին վերաբերող ցուցանիշները գալիս ենք այն համոզման, որ քաղաքի ընտանիքները կանգնած են գոյատևման լուրջ խնդիրների առջև: Գրեթե յուրաքանչյուր երիտասարդ ընտանիքում ամուսինները ունենում են մեկ, առավելագույնը՝ երկու երեխա: Այսինքն անգամ պարզ վերարտադրություն չի կատարվում: Նման իրավիճակն ի վերջո բերելու է սերնդափոխության նորմալ ցիկլի խախտմանը: Բացառված չէ, որ այս միտումը պահպանվելու դեպքում ապագայում մահացածների թիվը կգերազանցի ծնվածների թվին:

Չորրորդ ենթաբաժնում փորձ է արվում ներկայացնել Գյումրիի բնակչության թվաքանակի փոփոխությունը մոտակա 12 տարիների ընթացքում:

Որևէ երկրի կամ առանձին վարչամիավորի ու խոշոր քաղաքի բնակչության հեռանկարային թվաքանակը և կազմը, մասնավորապես՝ աշխատունակ բնակչության հաշվառումները, պետության անվտանգությունը և հասարակության կայուն զարգացումն ապահովելու գործում բացառիկ կարևորություն ունեն: Բնակչության հեռանկարային թվաքանակի հաշվառումների հիմքում հարկավոր է դնել միայն գիտական վարկածներ, որոնց հավաստիության աստիճանը կախված է այսօրվա ժողովրդագրական գործընթացների ու սոցիալ-տնտեսական գործոնների համակողմանի ուսումնասիրությունից : Ժողովրդագրական կանխատեսումները սովորաբար կառուցվում են ծնելիության ու մահացության, ինչպես նաև միգրացիայի այս կամ այն բնութագրի փոփոխության վերաբերյալ եղած վարկածների հիման վրա: Այդ առումով մեր կանխատեսումն արված է PROST (մշակվել է Համաշխարհային բանկի կողմից) մոդելի միջոցով: Վերլուծություններն ու կանխատեսումները հիմնվում են ՀՀ ԱՎԾ «Սոցիալ-տնտեսական իրավիճակը Հայաստանում, 2002թ.» վիճակագրական ժողովածուի, 2002թ. Վիճակագրական տարեգրքի, 2001թ. մարդահամարի, 2002թ. Աշխատուժի հետազոտության տվյալների, ինչպես նաև այլ աղբյուրների վրա: Թվային տվյալները նախապես համադրվել են ԱՀՌԾ-ում ներկայացված կանխատեսումների հետ, որոնք արվել են 2002-2015թթ. համար: Մեր հաշ-

վարկով 2010թ. հետո Գյումրի քաղաքում վերարտադրող կանանց և մինչամուսնական տարիքի աղջիկների տեսակարար կշիռն աստիճանաբար կնվազի, իսկ տարեցներինը՝ կաճի: Հետևաբար, նույնիսկ պտղաբերության գործակցի մեծության կայունության պայմաններում պետք է սպասել ծնելիության գործակցի հետագա նվազում: Վերջինս Գյումրիում աստիճանաբար կնվազի և 1000 բնակչի հաշվով կկազմի 7-8 մարդ, որը կարծում ենք, առաջին հերթին պայմանավորված կլինի քաղաքի բնակչության ծնելիության հատուկ գործակցի նվազմամբ:

Կատարված ժողովրդագրական վերլուծությունները ոչ մի հիմք չեն տալիս ենթադրելու, թե 2010-2020թթ. Գյումրիում կնկատվի ծնունդների թվի աճ, ընդհակառակը այն կնվազի և մոտավոր հաշվարկներով ծնունդների տարեկան միջին թիվը քաղաքում կկազմի 900-1100 երեխա, այժմյան՝ 1346-ի դիմաց: Հեռանկարում խոշոր փոփոխություններ չեն նկատվի նաև քաղաքի բնակչության տեղաշարժերում: Մեր կարծիքով նշված տարիներին քիչ հավանական է նաև այլ վայրերից ամուսնական տարիքի բնակչության ներգաղթը կամ բնակչության ռեէմիգրացիան: Ի վերջո, բնակչության ծնելիության այժմյան մակարդակը պահպանվելու դեպքում անգամ, քաղաքի բնակչության բնական աճի գործակցի մեծությունը բացասական է լինելու: Այսինքն, 2011-2020թթ. քաղաքում մահացածների թիվը գերազանցելու է ծնվածների թվին, իհարկե եթե այդ տարիներին ինչ-ինչ պատճառներով չլինի բնակչության զանգվածային ներգաղթ:

Ժողովրդագրական այս իրավիճակի պահպանման դեպքում, նշված տարիներին քաղաքում մահացածների թիվը ծնվածների թվին կգերազանցի 500-700-ով, ինչը կնշանակի, որ քաղաքի բնակչության թվաքանակը բնական վերարտադրության հաշվին մինչև 2020թ. կնվազի 5-7 հազ. մարդով և կկազմի 128-130 հազ. մարդ:

Եզրակացություններում ամփոփվել է քաղաքի բնակչության ժողովրդագրական հիմնախնդիրների արդյունքները և կատարվել են համապատասխան եզրահանգումներ.

- Շիրակի, մասնավորապես Գյումրիի բնաաշխարհագրական պայմանները նպաստել են բնակչության կենսապահովման յուրահատուկ մշակույթի ձևավորմանը և խթանելու ընտանեկան ավանդույթների հարատևմանը:
- Մինչև XIX դարի վերջերը քաղաքի բնակչությունն ավելանում է հիմնականում բնական աճի հաշվին:
- 1918-1921թթ. Գյումրիի բնակչության թիվը զգալիորեն նվազում է: Թուրքերի ավազակային հարձակումների արդյունքում քաղաքի բնակչության թիվը պակասել է 10 հազարով:
- Գյումրիի արդի բնակչության ձևավորման ու աճի վրա նշանակալից հետք են թողել, նախ XIXդ. և XXդ. սկզբների արևմտահայերի

զանգվածային ներգաղթը և դրան հաջորդած սփյուռքահայերի հայրենադարձությունը, իսկ 1930-ական թվականներից՝ նաև գյուղական բնակչության ներհոսքը:

- XXդ. երկրորդ կեսի Գյումրիի բնակչության բնական վերարտադրության ցուցանիշների փոփոխությունը հաշվի առնելով, այն կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլն ընդգրկում է 1950-1965թթ., երբ քաղաքի բնակչության ծնելիության մակարդակը բարձր էր, իսկ մահացությունը՝ ցածր: Երկրորդը՝ երբ 1000 բնակչի հաշվով դիտվում էր ծնունդների և մահացությունների թվի նվազում: Երրորդ փուլը սկսվել է 1993թ. և շարունակվում է մինչև օրս: 1988թ. մինչև 2001թ. բնակչությունը նվազել է 81 հազարով: Այս իրավիճակը բացատրվում է քաղաքական, սոցիալ-տնտեսական և դրանցով պայմանավորված ժողովրդագրական գործոններով: Գյումրիի բնակչության թվաքանակի նվազման հիմնական դրդապատճառներն էին աղետալի երկրաշարժը, 1990-ական թվականներին սկիզբ առած և մինչև օրս շարունակվող բնակչության արտագաղթը: Այդ տարիներին 1000 բնակչի հաշվով դիտվել է ծնունդների թվի շեշտակի նվազում, իսկ մահացածների՝ աստիճանական աճ:
- Այս ամենի արդյունքում խաթարվել է բնակչության սեռատարիքային համամասնությունը, որը պայմանավորված էր աղետալի երկրաշարժով, արտագաղթողների մեջ տղամարդկանց գերակշռությամբ: Աղետի գոտուն բնորոշ սոցիալ-տնտեսական ճգնաժամը, գործազրկությունը, աշխատատեղերի բացակայությունը, տնակային պայմանները, բարոյա-հոգեբանական ծանր մթնոլորտը ոչ միայն բերեց Գյումրիի բնակչության արտագաղթի ակտիվացմանը, այլև բացասական ազդեցություն գործեց ծնունդների թվի վրա:
- XXդ. երկրորդ կեսի Գյումրիի էթնոժողովրդագրական գործընթացների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք իրենց գործուն ազդեցությունն են ունեցել ոչ միայն քաղաքի, այլև Շիրակի բնակչության թվաքանակի, սեռատարիքային, ընտանեկան, էթնիկ, ընտանիքի միջին չափերի սոցիալ-մասնագիտական կազմի, աշխատանքային ռեսուրսների ու զբաղվածության կառուցվածքի վրա:

Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատություններում

1. Բոյաջյան Ա., Շիրակում 1936-37թթ. բռնությունների գործընթացի ժողովրդագրական որոշ հարցեր, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի(այսուհետ՝ ՇՀՀԿ) գիտական աշխատությունների ժողովածու հ. 1, Գյումրի, 1998, էջ 146-150:
2. Բոյաջյան Ա., Լենինականի գավառի սոցիալ-տնտեսական կազմակերպումը 1920-40թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 2, Գյումրի, 1999, էջ 218-226:
3. Սարգսյան Հ., Բոյաջյան Ա., Գյումրու աշխատանքային ռեսուրսները և զբաղվածության շարժը 1990-2000թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 3, Գյումրի, 2000, էջ 189-195:
4. Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Լենինականում 1970-1980-ական թվականներին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 4, Գյումրի, 2001, էջ 197-205:
5. Բոյաջյան Ա., Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության թվի շարժը 1900-1970թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 5, Գյումրի, 2002, էջ 197-205:
6. Սարգսյան Հ., Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Գյումրի քաղաքում 1990-2000թթ., Պատմա-բանասիրական հանդես, 2002, թիվ 2(160), էջ 233-242:
7. Բոյաջյան Ա., Լենինականի բնակչության զբաղվածությունն 1970-1987թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 7, Գյումրի, 2004, էջ 157-165:
8. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մաս I), ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 8, Գյումրի, 2005, էջ 65-70:
9. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մաս II), ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատությունների ժողովածու, հ. 9, Գյումրի, 2005, էջ 121-125:
10. Բոյաջյան Ա., Գյումրու բնակչության աճի տեմպերը և զարգացման հեռանկարները, Աշխարհագրական գիտությունը Հայաստանում (ներկան և ապագան), գիտական աշխատությունների ժողովածու, Եր., 2006, էջ 280-285:
11. Բոյաջյան Ա., Հայրենադարձությունը Լենինականում 1946-47թթ. (ըստ ՀԱԱ Շիրակի տարածքային բաժնի նյութերի), ՇՊՄժ հանրապետական 7-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 161-165:

12. Boyadjian A., La region du Chirak –cadre naturel et geographicue, Rouen, 2007, p. 17-23.

БОЯДЖЯН АРТАШЕС ГЕВОРКОВИЧ

Динамика численности населения г. Ленинакана-Гюмри в 1950-2000гг.

Резюме

В последние годы в Армении значительно возрос интерес к проблемам демографии. Это в первую очередь связано с современными социально-политическими и экономическими проблемами демографической ситуации в республике.

В диссертации сделана попытка сопоставления этнодемографических процессов в прошлом и настоящем в динамике численности населения и выявления дальнейших тенденций развития второго города республики - Гюмри.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

В первой главе диссертации дается характеристика этнодемографии в первой половины XIX-XX вв. и история формирования населения г. Гюмри, а также его занятость и передвижения.

В представленный период в городе наблюдался стабильный рост населения, за исключением 1918-1920гг.

Во второй главе рассмотрен период 1950-1988гг., в частности, вопросы занятости населения. В эти годы экономика города, в особенности, интенсивное развитие производства стимулировали относительный рост населения. Однако, в связи с перепроизводством населения одновременно наблюдался процесс миграции. Проанализированы ее масштабы и направленность, половозрастной, социальный, этнический состав мигрантов. В 1980-е годы в Ленинакане сальдо миграции было отрицательным. В этот период наблюдается снижение рождаемости и уменьшение среднего размера семьи.

В третьей главе исследованы процессы динамики населения г. Гюмри в 1989-2001гг. В эти годы резко снизилась численность населения города за счет человеческих потер в результате Спитакского землетрясения 1988г. Это привело к нарушениям демографических процессов: вызвало волну массовой миграции, снижение рождаемости и постепенный рост смертности.

На основании данных переписи 2001г. в Армении представлены тенденции развития г. Гюмри до 2020г.

В выводах диссертации обобщены результаты этнодемографических процессов населения города во второй половине XX века.

ARTASHES GEVORG BOIAJYAN

POPULATION DYNAMICS OF GYUMRI – LENINAKAN IN 1950-2000

RESUME

The recently grown interest towards demographical issues in Armenia is first of all explainable by contemporary trends in population dynamics and their close relations with socio-political and economic processes. The results of this dissertation thesis are interesting in view of insufficient scholarship in the field of urban demography in Armenia. Gyumri as the second urban center of Armenia has served as an object of this first attempt. Methodologically the study combines the statistical analysis with ethnographic methods to survey the population's demographic behavior.

The study consists of "Introduction" and three chapters, completed with bibliographical list of related publications and archival materials.

First Chapter investigates the formative period of the town up to the second half of XX century from ethno-demographical and historical perspectives. At this period Gyumri (Alexandrapol) emerged as a provincial center of a vast Armenian populated hinterland on the Russian-Turkish borderlands, frequently affected by wars and migrations across that borders. At this period the population of the town has constant growth except the period of 1918-1920.

Second Chapter characterizes the ethno-demographical patterns of the industrializing city Leninakan since 1950. Economic development of the city had greatly shaped its demographical changes, rapid growth of population before the devastating earthquake of 1988. The chapter illustrates the causes and consequences of accelerated urbanization of Leninakan in frame of demographical data concerning similar processes in Armenia and USSR.

Third Chapter studies the population's behavior in post-catastrophe period, the effects of which were complicated with transition processes and deindustrialization of the urban center. Dramatic decrease of population, significant human losses and emigration are main characteristics of this period.

The final, **Fourth Chapter** uses the Census data of Gyumri for characterization of the modern population structure and for prospective evaluation of the population capacity up to 2020.